

8089

8090

8091

8092

8093

8094

8095

8096

8097

8098

8099

8100

891.99

9-70

98

Bound by
Standard Bookbinding Co.
34-36 Pleasant Street,
Boston, Mass.

№ 6 Հրատարակութիւն ՉԷ. Կուս. Ըմբռնիկայի Գործ. Յանձնարարի

ՍՈՎԵՏ ԻՄՆ Մ. ԳԵԼՕՅԵԱՆՑ

**ԿՂԵՐ, ԿՐՕՆ, ԵԿԵՂԵՑԻ
ԵՒ
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

(Արտատպւած «Ճրիտասարդ Հայաստան»-ից)

ԳԻՆՆ Է ՍԷՆՏ

ՏԳՈՐԱՆ

«ՆՐԻՑԱՍՈՐԻ ՀԱՅՈՍՏԵՆ»-Ի

1910

329.14
7-41
№ 6 Հրատարակութիւն Հնչ. Կուս. Ամերիկայի Գործ. Յանձնախմբի

ՍՈՎԵՏ ԽԱՆ Մ. ԳԵԼՕՅԵԱՆՅ

**ԿՂԵՐ, ԿՐՕՆ, ԵԿԵՂԵՑԻ
ԵՒ
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

(Արտատպւած «Երիտասարդ Հայաստան»ից)

ԳԻՆՆ Է 5 ՍԷՆՏ

ՏՊԱՐԱՆ

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

1910

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Նկատելով որ Հայկական եկեղեցիների «Բաց ու Գոցի» տա-
րօրինակ հարցի առթիւ սկսած պայքարը և այդ պայքարի առ-
թիւ ճիշտ շարք իմաստակների արած ճիակողմանի և նոյն իսկ
հակաընկերվարական պրօպագանդան մեր ժողովուրդի միամիտ
խաւերի մէջ տեղի է տւել ճի տեսակ աննպաստ կարծիքների և
զրպարտիչ ենթադրութիւնների հանդէպ ընկերվարականութեան և
ի մասնաւորի հայ ընկերվարականութեան, ուստի Ս. Դ. Հ. Կ.
Ամերիկայի շրջանի Գործադիր Յանձնախումբս անհրաժեշտ հա-
մարեց «Երիտասարդ Հայաստան»-ի մէջ պարբերաբար լոյս տե-
սած «ԿՂԵՐ, ԿՐՕՆ, ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»
խորագրով կարեւոր եւ լուրջ խմբագրականները, որ արդիւնք են
ընկեր Սոկրատ Խանի բեղմնաւոր գրիչին, բրօշիւրի ձեւով տա-
րածել ժողովուրդի մէջ, հաւատալով միևնոյն ժամանակ թէ՛ այդ
պիտի վերացնէ ժողովուրդի մէջից աննպաստ ենթադրութիւն-
ները եւ ի մասնաւորի ցոյց պիտի տայ Ս. Դ. Հ. Կ. Հայեացքը
այդ նկատմամբ:

ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

78720-42-



844-87

27



ՍՈՎԻՍ ԽԱՆ Մ. ԳԵԼՕՖԵԱՆՑ

ԿՂԵՐ, ԿՐՕՆ, ԵԿԵՂԵՑԻ
ԵՒ
ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

Մի հարց, որ այսօր կարօտ է լուսաբանութեան, այդ՝ կրօնի, եկեղեցու, և նրանց սպասարկու՝ կղերականութեան բռնած դիրքն է: Մի բան, որ ցարդ հայերիս համար ճշուութեան ձեջ մնալով առիթ է տւել անվերջ թիւրիմացութիւնների և հասարակական կեանքին սպառնացող ճեծածեծ չարիքներին:

Աճենից աւելի ճեր Հայ Յեղ. և Քաղաքական կուսակցութիւնների վրայ էր ծանրանում այս կարեւոր հարցի լուսաբանութիւնը, որի վրայից նրանք անցել են թեր և դէժ յայտնութիւններով միայն, առիթ տալով այդպիսով մի շարք խակ և իմաստակ դորձիչներին և պրօպագանդիստներին, այդ առթիւ ժողովրդի առաջ տալու նոյն խակ հակաընկերվարական բացատրութիւններ:

Այսպիսի դէպքեր յաճախ տեղի ունեցան երկրի ձեջ սահմանադրութեան հռչակումից յետոյ, ուր մի շարք իմաստակ բանախօսներ յանուն ընկերվարականութեան, գայթակղութեան պատճառ դարձան միաձիւթ ժողովրդի ձեջ, եկեղեցու, կրօնի և կղերի նկատմամբ իրենց արած խեղաթիւրւած, անվայել ու անհիմն յար-

ձակունքներովը, առանց սակայն բացատրել կարենալու այդ բուրբ զրդապատճառը և թէ՛ իսկապէս ի՞նչ է ընկերվարականութեան համոզումն ու որոշած զիրքն այդ առթիւ։ Իսկ դրա հետեւանքը եղաւ ա՛յն անարդար և անհիմն համոզումը, որով հայութեան միաձիւս և նոյն իսկ հակայեղափոխական ու յետադէմ տարրը օգտուելով իրերի այդ աննպաստ վիճակից, սկսեց յայտարարել թէ սօցիալիզմի՝ ընկերվարականութեան՝ նպատակն է անկրօնութիւն, եկեղեցու քանդումն և կղերի ոչնչացումը, հետեւաբար համայնական անբարոյականութիւն . . . :

Եւ ընկերվարականութեան ճակատին նետուած այդ խաւարալուռ զրպարտութիւնները, որ սկզբում որպէս շշուկ և չար բամբասանք՝ անուշադրութեան մէջ էին արձագանքում, այսօր, շընորհիւ «Բաց ու Գոց»ի արնոտած խնդրին մարմնանալով, սկսել է լոյս աշխարհ դալ և ժողջրդական ծածոց դառնալ։ Իրերի այս վիճակը, որ ամենածանր նախատինքը կարելի է համարել հանդէպ ընկերվարականութեան, մեզ հարկադրում է մի բանի կէտերի լուսաբանութիւնով պարզել ժողովրդի պղտորած ու շփոթած միտքը։

Սօցիալիզմը, ընկերվարականութիւնը չի բարոյել և չի քարոզում, ո՛չ անկրօնութիւն, ո՛չ եկեղեցիների քանդում և ո՛չ էլ կղերի բնաջնջումը, այլ կրօնի կատարեալ ազատութիւն, եկեղեցու անջատումը պետութիւնից և կղերի արտաքսումը քաղաքական կեանքից ու նրա կեղրոնացումը իր կոչման և իր աւաստութեան սահմանների մէջ։

Պարզենք մեր ասելիքը։

Գիտական սօցիալիզմը, որ լիովի ուսումնասիրութիւնն է համարողային ընկերութեան դարաւոր թշառութիւնների և զերկանքների բոլոր երևոյթների և նրանց իսկական շարժառիթներին, մեր առաջ է պարզում պատմական ա՛յն անուրանալի իրողութիւնը, որ այն օրանից երբ մարդկային ցեղը հետեւելով բնութեան օրինաց, իր գոյութեան կռիւը հիմնեց ֆիզիքական կուլտուրայի և բունութեան վրայ, նա բաժանեց երկու որոշ դա-

սակարգերի, որոնցից մէկը, որ ներկայանում էր ընդհանրութեան չնչին և աննշան մասը, փոքրամասնութիւնը, կռթնելով իր ֆիզիքական ոյժի բնատուր առաւելութիւնների վրայ ճնշում, բռնանում ու կլանում էր իրենից թոյլ, սակայն մեծամասնութիւն կազմող դասը, ապահովելու համար իր գոյութիւնը, իսկ երկրորդը՝ այս վերջինը, մեծամասնութիւն կազմող թոյլ դասը, որ ճնշւում, քամւում և ճգմւում էր իր գոյութեան պայքարի մէջ, սակայն միշտ ի նպաստ զօրաւորի։

Եւ այս հակամարտ դասակարգերը անհամար դարերի ընթացքում իրենց պայքարը շարունակեցին, միայն ամէն շրջանի մէջ տարբեր ձևով և տարբեր երևոյթով։

Նինէի, Պէրսէպոլիսի և Եգիպտոսի հրաշալիքները ձեռակերտելու համար անթիւ ու անհամար գերիների բանակները քշելու կոչւած սուրի, մտրակի ու գերութեան շրջանին փոխարինելով հողային գերութիւնը՝ ճոռտային վիճակը, ստեղծեց դասակարգային պայքարի մի նոր երևոյթ, և շահագործումի ու շահագործելու մի նոր սիստէմ, սակայն այս շրջանն էլ մարդկային զարգացումի և քաղաքակրթութեան առաջացումի հետ աստիճանաբար փոփոխութեան ենթարկւելով երևան եկաւ տնտեսական գերութեան արդի շրջանը, ուր թէև գոյութեան պայքարի ձևը և գոյնը փոխւած, սակայն պայքարող կողմերը ստեղծագործման օրից գոյութիւն ստացած՝ նոյն երկու դասակարգերն են, որոնց մէկը, զօրաւոր փոքրամասնութիւնը, փոփոխակի կերպով առանձնաշնորհւած իր ֆիզիքական, մտրակի և տնտեսական ոյժերով, ինչպէս ասեցինք, իր իրաւունքն է համարել ի նպաստ իր գոյութեան պահպանումի ու փառաւոր և շքեղ ապրուստի միշտ շահագործել, քանել և նոյն իսկ սպաննել ու ոչնչացնել իրենից հազարաւոր անգամ մեծ թիւ ներկայացնող, սակայն թոյլ ու անկարող դասակարգին. իսկ միւսը, այս վերջինը որ թէև թիւով անհամեմատ բարձր, սակայն ինքնագոյութեան պահպանումի տեսակետով անզօր ու անճարակ, միշտ իր կեանքի իրաւունքը և այդ իրաւունքի ոյժն ու կենսունակութիւնը գոյութեան պայքարի սեղանի վրայ զոհաբերելով, բաւականացել է լոկ իր չարքաշ գոյութիւնը քարշ տուող մի պատառ չոր հացով, որը

«ողորմածաբար» ներկայացրել է նրան շահագործողի արնոտ ձեռքը:

Այսպէս, մենք տեսնում ենք որ մարդկային ընկերութեան երեւոյթի հետ միաժամանակ երևան է եկել և դասակարգերի գոյութիւնը, որոնք միշտ և հարկւրաւոր դարերի ընթացքում պտտելով գոյութեան կռւի շուրջը կտրել, անցել են շատ և շատ շրջաններ, ուր և զօրաւոր, տիրող և շահագործող դասը իր տիրապետութեան հիմքերը հաստատուն դարձնելու և շահագործող դասակարգին միշտ լուռ ու անխօս հնազանդութեան մէջ պահելու համար զինել է շատ և շատ աններելի միջոցներով... Սուրի, մարակի, մահաւան սարսափի և վերջապէս ֆիզիքական ոյժի բացարձակ տիրապետութեան դէմ թէրևս ըմբոստանար շահագործող դասը և նոյն միջոցներով տապալէր տիրապետող դասակարգի առանձնաշնորհաւ գոյութիւնը, եթէ այս վերջինս մարդկային հոգու, մաքի և նրա ներքին աշխարհի վրայ իշխելու, ազդելու և զսպելու համար օգնութեան չկանչէր երկնային, աներևոյթ և անտեսանելի Աստուծային ա՛յն գորութիւնը, գերբնական ա՛յն ստեղծագործիչ ոյժը, յանուն որի, տիրապետող դասի բերանով մարդկութեան գլխին որոտաց զանազան երկնային պատգամներ և հաստատուեց այնպիսի՝ օրէնքներ, որոնք սահմանաւ են միայն շահագործող դասին հնազանդութեան և համբերատարութեան սահմանների մէջ պահելու համար, և որպէսզի ժողովուրդը կատարեալ սարսափի ու հնազանդութեան մէջ պահէր՝ իշխող և շահագործող դասակարգը փութաց իր հնարած այդ երկնային օրէնսդիր գորութիւնը մարմնացնելով, զանազան ձևերի և պատկերների տակ (կուռքերը), մարդկութեան առաջ դնել և ըստիպել նրան մինչև գետին խոնարհելով երկրպագել և կամազրկօրէն ընդունել նրա, այդ անբան, անշունչ և անզգայ կուռքի պատգամները, որոնք թելադրում էին միայն տիրապետող դասակարգի կողմից . . . :

Եւ այս միջոցը, որ հիւանալիօրէն յաջողեց մարդկութեան ներքին աշխարհը, նրա հոգեկան և մտաւոր ոյժերն ու բանականութիւնը նւաճելով կոյր ու խաւար հնազանդութեան սահմանների մէջ շղթայաւ պահել, այդպիսով, հնազանդեցնելով

նաև նրա մարմնաւոր և ֆիզիքական ոյժերը ի նպաստ շահագործումի, դարձաւ տիրապետող, շահագործող և մարդկութեան արինը ծծող դասակարգի գոյութեան խարխիւր, նրա իշխանութեան պատանդսնը և թագաւորութեան դահլէ:

Նւաճելով մարդկային ներքին աշխարհը՝ շահագործող դասը, ժամանակի ընթացքում և կեանքի պահանջներին համապատասխան սկսեց մշակել, կոկել և հետզհետէ փոփոխութեան ենթարկել իր հիմնած այդ նոր միջոցը, որին նա տւել էր կրօնք անունը, և որի հետ պայմանաւորել էր իր գոյութիւնը:

Այնուհետև կրօնքը և նրան թելադրող գորութիւնը, որ երբեմն տեսանելի դարձաւ յանձին անհամար կուռքերի և չաստածների, ու երբեմն էլ աներևոյթանալով պապստանեց երկինքի անհասանելի բարձրութիւնների վրայ, ասես թէ երևան բերեցին պարզապէս ահաւոր աղէտի, ամենամեծ թշուառութեան դարագլուխը հիմնելու՝ առանց այն էլ արդէն չարչարած և բզբաւած մարդկութեան համար, որովհետև հէնց այդ տեղից տիրապետող և շահագործող դասը մարդկութեան շահագործումի ահազին ձեռնարկը երկու ճիւղերի բաժանելով, մէկ ձեռքում սուրը և մտրակը բռնած՝ շահագործում էր մարդկութեան ֆիզիքական, արտաքին և մատերեալական աշխարհը, իսկ միւս ձեռքում՝ աներևակայելի, անտեսանելի և գերբնական մի գորութեան պատգամները, կրօնը՝ շահագործելով նրա հոգեկան, մտաւոր և վերացական աշխարհը . . . :

Եւ իրերի այս դառն վիճակը դարեր ու դարեր շարունակելով և ժամանակակից պահանջներին համապատասխանելու համար, շահագործող դասակարգի բարեհայեցողութեամբը միայն զանազան փոփոխութիւնների ենթարկելով հասաւ ա՛յնտեղ, ուր մարդկային ընկերութիւնը իր գլխին կանգնած տեսաւ, թէև առերեւոյթ տարբեր, սակայն ի բնէ, ի ծնէ և բոլոր հանգամանքներով մէկ աղբիւրից բխող երկու բացարձակ իշխանութիւններ, մէկը աշխարհական, միւսը հոգեւոր, կամ ասենք մատերեալիստական և վերացական: Սակայն երկուսն էլ մէկ նպատակի և մէկ վերջաւորութեան սահմանաւ, այն է, մարդկային էութիւնը, նրա գոյութիւնը իր բոլոր ծալքերով և խաւերովը շահագործել ի նը-

պաստ մի բուռ բռնապետների, ճրիակեր պարադիտների՝ թոյլ և անզօրների արիւնով խոշորացող վաճառների և վերջապէս շահագործող դասակարգի:

Եւ այս իրողութիւնը փաստաւորապէս հաստատուած է Ժիւլի-տէրնների Ռիմպեան պատմութիւնով, արեւի պատգամները որոտացող քուրճերի և Գրիստոսի վարդապետած իրական Աստուծոյ երկնային պատգամները ու խոստացւած արքայութեան մէջ յաւիտենական Հանգստութեան բաժիններ վաճառող Պապերի, Պոպերի և այլն այսպիսիների պատմութիւններովը, որոնք հոգեւոր և մարմնական իշխանութիւնները միացրած՝ իրենց և իրենց դասակարգին պատկանողների գոյութիւնը ապահովելու համար, աշխարհը և մարդկութիւնը արեան և արցունքի մէջ խեղդեցին, որին յաւիտենական վկայ պիտի կանգնեն Զրադաշտեան և Արաբների դարաւոր արշաւանքները, Քրիստոնեայ աշխարհի (Պապերի թելադրութեամբ և ղեկավարութեամբ) կատարած ա՛յն ամօթաբեր խաչակրաց արշաւանքները, ուր կուլ գնացին մարդկային ցեղի միլիոնաւոր ընտիր զաւակները: Եւ ինչո՞ւ, ի՞նչ էր այդ բոլորի պատճառը, եթէ ոչ գոյութեան պայքար և այդ պայքարի մէջ իշխող և շահագործող դասակարգերի տնտեսական ու տիրապետութեան շահերի ապահովութեան անզուսպ տենչը:

Հետեւելով մարդկային կեանքը ձեւակերպող դասակարգերի կեանքի բնական և պատմական բոլոր երևոյթներին և այդ երեւոյթներից առաջացած հետեւանքներին, մենք կանգնում ենք ա՛յն անժխտելի իրողութեան դէմ, որ համամարդկային թշուառութեան գլխաւոր պատճառը լինելով նրա տնտեսական պէտքերը, այդ պէտքերի շուրջը կատարուած է յափշտակութեան մի սոսկալի, մշտատեւ պայքար, ուր զօրաւորը յաղթելով թոյլին, անզօրին, հացի պատառը դուրս է քաշում նրա բերանից: Սակայն, որովհետեւ այդ յափշտակութեան ենթարկող և զրկողի թիւը շատ է և հետեւաբար նրա ֆիզիքական հաւաքական ոյժը կարող է մի ժամանակ վտանգաւոր լինել յափշտակողի համար, հետեւաբար այս վերջինս ճգնել է միշտ ընկճել իրեն ապրեցնող դասակարգի ֆիզիքականի հետ նաեւ նրա հոգեկան ու մտաւոր աշխարհը և այս նըպատակի համար իսկ հաստատել է նա կրօնը, կրօնի պաշտա-

մունքների և նրա օրէնսդրական հիմնարկութիւնների կեղծոն՝ եկեղեցին, մզկիթը, սինագոգը և կռատունը, իսկ այդ բոլորը դեկավարելու, կառավարելու և նրանց արդիւնքը շահագործող դասին ի սպաս դնելու համար՝ քուրմը, մոլլան և կղերը...:

Մինչև այստեղ մենք փաստերով բացատրեցինք դասակարգերի գոյութեան և նրանց պայքարի շարժառիթների հարցը, թէ ինչպէ՞ս ու ինչի՞ց առաջացան կրօնները, կրօնատեղիները և այդ հաստատութիւնները ղեկավարող, սակայն էապէս շահագործող դասակարգից մնունդ առած ու նրա գոյութեան հետ պայմանաւորուած ու միախառնուած կղերական դասակարգերը:

Իսկ հետեւելով պիտի պարզենք թէ ի՞նչ պատճառներով, ի՞նչ տեսակէտով և ի՞նչ հողի վրայ է որ սօցիալիզմը, ընկերվարականութիւնը հակառակուած է այդ հաստատութիւնների ձգտումներին և գործելակերպերին, և ի մասնաւորի ի՞նչ հայեացք ունինա հանդէպ հ ա յ ե կ ե ղ ե ց ու և ն ր ա կ ղ ե ր ա կ ա ն ու թ ե ա ն ը:

Բ.

Արդէն մենք բացատրեցինք թէ ինչպէս գոյութեան կռիւ ընթացքում մարդկային զանգւածը բաժանեց դասակարգի, և թէ ինչպէս այդ դասակարգերից հզօրագոյնը, իր գոյութիւնը և այդ գոյութեան հետ պայմանաւորուած՝ շահագործումի և կեղեքումի տիրապետութիւնը ապահովելու և յաւերժացնելու համար, ստեղծեց և ստանձնեց ընկերային կեանքը գերութեան անարգալից շղթաների մէջ պրկող՝ երկու որոշ իշխանութիւններ, այն է, մարմնաւոր կամ ասեւք աշխարհական և հոգեւոր իշխանութիւնները: Եւ թէ ինչպէս այդ իշխանութիւնների տիրապետութեան տակ հիմնեց կրօնը, եկեղեցին ու կղերը որոնք դարձան տիրապետող դասակարգի ամենազօրաւոր նեցուկը, կեղեքելու և կողոպտելու համար շահագործող դասակարգը:

Իսկ այժմ պիտի ապացուցենք թէ ինչո՞ւ երեւան եկաւ ընկերվարականութիւնը և ի՞նչ պատճառներով է, որ նա հակառակ դիրք է բռնում հանդէպ այդ հաստատութիւնների և իշ-

խանութիւնները:

Ընկերվարականութիւնը ծնւած լինելով ընդհանուր ճարդկութեան համաշխարհային տառապանքի ծոցից, նա չպիտի կարողանար այդ համատարած տառապանքի համար դատապարտելի նկատել միայն քրիստոնեայ աշխարհի վրայ տիրող կրօնը, կըղերը և եկեղեցին, այլ նա այդ չարիքի արձատը գտաւ որչափ քրիստոնէական հոգեւոր հաստատութիւնների, նոյնչափով քուրմերի և մեհակների, մոլլաների և մզկիթների, խախաֆների և սինագոգների և վերջապէս ա՛յն բոլոր մեծ ու փոքր հաստատութիւնների ու հիմնարկութիւնների մէջ, որոնք զանազան ժամանակներում և տարբեր անուններով ու ձևերով երեւան եկան պարզապէս նախապաշարուածներով ու երկնային պատւէրների սարսափի տակ կաշկանդելու ճարդկային բանականութիւնը, կասեցնելու նրա գիտակցութեան թուլիքը և ստրկութեան սահմանների մէջ պահելու նրա հոգեկան աշխարհը, պարզապէս նրան փրկեցապէս շահագործելու և տնտեսապէս կեղեքելու նպատակով ի նպաստ տիրապետող դասի: Հետևաբար սխալ է հաւատալ և ասել թէ Սօցիալիզմը պայքարում է միայն և բացառապէս քրիստոնէական կրօնի, նրա եկեղեցու և կղերի դէմ: Ո՛չ, նա լինելով միջազգային, հարկադրւած է նաև մաքառել միջազգային կրօնքների, կղերների և դրանց սպաստանարան եղող կրօնատեղիների դէմ:

Այս է կրօնքի նկատմամբ ընկերվարականութեան հիմնական հասկացողութիւնը:

Եւ այս հիմնական հասկացողութիւնը, սօցիալիստական վարդապետութեան այս կարեւոր կէտը բացատրելու համար, բաւական է համաշխարհային պատմութիւնից առնել մի քանի փաստեր միայն:

Պկսելով Ծայրագոյն Արևելքից, մենք պիտի տեսնենք թէ ինչպէս Բուդայականութիւնը զանազան բազմազան կուռքերի միջոցով և նրանց արեւստական պատւէրներովը հաղարաւոր միլիոնների մի ահագին ժողովուրդ տգիտութեան, խաւարի, նախապաշարունակների և երեւակայական ու անտեսանելի խոստումների ու պատիժների սարսափի տակ՝ գերութեան շղթաների մէջ պըր-

կած՝ նրանց ոչխարների հօտի պէս կթել, քամել, մորթել և շահագործելուց յետոյ, նրանց անընդհատ և յանուն հէնց այդ կրօնի, հաւատալիքի և նրա շահերի և պատւի քշել են կռւի, պատերազմի և եղբայրասպանութեան դաշտը, այնտեղ՝ այդ արնոտ տեղում, շահագործող ու կեղեքող դասի ոսկորների և կըմախքացած գանկերի վրայ հիմնելու համար տիրող և շահագործող դասակարգի թագաւորութեան և իշխանութեան գահը....: Այն գահը, որ կոչւած էր գոյութեան կռւի դաշտում դիմադրելու դրացի Պարսկաստանի, Կէոմէթրսի և Դարիւսի հայրենիքի մէջ արեւի պատգամները որոտացող՝ Զրադաշտեան հոգեւոր մարմնաւոր, երկնային ու աշխարհական իշխանութիւնների դէմ, որոնք գալիս էին խանգարելու դրացի շահագործողի խաղաղ ու հանգիստ ապրելակերպը:

Եւ ի՞նչ էր Զրադաշտականութիւնը, փառահեղ Արևի որդիների շահագործումի եւ ճարդկային հոգեկան աշխարհը գերելու այդ նորաձեւութիւնը, եթէ ոչ Արիական ցեղի միապաղաղ զանգըւածը, նրա փրկիչական ու հոգեկան աշխարհները կաշկանդելու և շահագործելու կոչւած՝ մի խումբ զօրաւոր ճարդկանց ճարպիկ մտքի արտայայտութիւնները, որով զինւած՝ Զրադաշտի և Գոշտասպի նման փառամոլ ու կեղեքիչ հոգեւոր ու մարմնաւոր իշխանները դարեր և դարեր յանուն կրօնքի, հոգու փրկութեան և խոստացւած յաւիտենական երջանկաւէտ վայելքների խեղճ ու կրակ ժողովուրդը տգէտ անասունների նման մերթ դէպ հնդկաստան, մերթ Եգիպտոս և Մրաբիա և մերթ էլ Հայաստան ու Հռոմ քշելով, նրանց առատահոս արիւնի և ոսկորների զանգըւածովը ամրապնդեցին Պարսիկ շահագործող ու տիրող դասակարգի գոյութեան շէնքը, որը յաւէտ պատուհաս դարձաւ խեղճ ժողովրդի գլխին: Եւ ի՞նչ արհաւիրքներ, ի՞նչ չարիքներ չստեղծեց ճարդկութեան համար այդ արեւի կրօնի, աշխարհական և հոգեւոր իշխանութիւնների միախառնումը՝ յանձին հռչակաւոր Զրադաշտի և ինչո՞ւ, ի՞նչ էր ճարդկութեան յանցանքը որ մէկ ճարդի ցուցմունքով և նրա հրամանովը անխօս ու անմոռնչ լուրար իր և իր եղբայրների արեան մէջ...: Բայց չէ՞ որ գոյութեան կռիւ կար և այն էլ տնտեսական հողի վրայ, իսկ այդ

կուլի, այդ պայքարի յաջողութեան, տնտեսական յաղթութեան և ընկճումների ետևից ընկնող ծի խուճբ Հաճագործողների և՛ տիրող դասի յաջողութեան համար պէտք էր ոչխարացած՝ անբան, անխօս, անլեզու, անզգայ և բթացած մասսայ, և այդ մասսան, թէև Հաճագործող, բայց Հաճագործողի ձեռքում գործիք դարձող մեծամասնութիւնն էր, որ կաղապարում և պատրաստում էր Արևի կրօնը երկար դարերի ընթացքում:

Իսկ այդ խաւար շրջանից յետոյ ի՞նչ ասեցին մեզ, Մովսէսի ձեռքով, Փարաոնի գերութիւնից ազատւած Իսրայէլացիքի համար, Արեւից աւելի բարձր՝ եթերքի բարձունքից, անհասանելի երկնքից և անտեսանելի Աստուծոց պատգամներ և օրէնքներ բերող Քրիստոսը և Քրիստոնէութիւնը, և Իսմայէլեան ցեղի համար հոգևոր գերութեան նոր դարագլուխ և նոր պատմութիւն բացող Մոհամմէդը և Մահմետականութիւնը, որոնք հանդիսացան տիրող դասակարգի իշխանութեան ամենահաստատուն պատւանդանը, իսկ նրա կեղեքումի և Հաճագործումի միջոցներից՝ ամենակատարելագործւածն ու ամենանուրբը:

Եւ «մարդկութեան միտքը մշակելու, բարոյականը բարձրացնելու և նրա հոգին փրկելու» կոչւած այս երկու վարդապետութիւնները, որոնց մէկը 19, իսկ միւսը 13 դար սրանից առաջ երեւան եկան, իրենց ազդեցութիւնով ու հետեանքներովը գերազանցեցին իրենց նախորդներին և տիրապետող ու Հաճագործող դասին ընձեռնած առանձնաշնորհումներովը աւելի վտանգաւոր և ֆլասակար դարձան մարդկութեանը, որովհետև նրանք դիւրութիւն տւեցին իրենց ներկայացուցիչ Մոհամմէդներին և նրանց հետեւորդ, Խալիֆա՝ Հարուն-էլ-Ռաշիդեան գերդաստանին ու Սաֆաւիտների ընտանեկան շղթային Մահմետական աշխարհում իսկ մի շարք Գրիգոր Դրդ-ի նման Պապերին ու զանազան կրօնապետներին՝ քրիստոնեայ աշխարհում, երկիրների ու ազգերի քաղաքական ու տնտեսական միացած ղեկը իրենց ափի մէջ առած՝ ինպաստ իրենց դասակարգային շահերին պատցնելու և ղեկավարելու աշխարհի գործերը և Հաճագործելու կեղեքւած ու թըշաւառացած ընչազուրկ մասսան:

Եւ կրօնական պատնէշների ետեւում կանգնած այս կրօնա-

կան դասը, կղերականութիւնը, որ կռնակը դարձրած իր նախկին սրբութիւնների տաճար՝ Արեւին, Անահիտին և Աստղիկին երկըրպագում է, այժմեան գերբնական անտեսանելի մի գորութեան առաջ, այնքա՛ն առաջացաւ իր անարդ պայքարի մէջ, որ նա սկսեց նոյնիսկ աշխարհական իշխանութիւնները ձեռք ձգելու ետևից ընկնել և նոյնիսկ յաջողեց: Օրինա՛կ, անթիւ ու անհաճար:

Արեւելքի մէջ Բաղդադը, իսկ Արեւմուտքի մէջ Վատիկանը, պատմական երկու հսկայ անմոռանալի կոթողներ են Քրիստոնեայ և Մահմետական աշխարհներում, որոնց առաջինի մէջ Աստուծապետական իրաւասութիւններով օծուած եւ 800 տարի տեւող Մահմետական Խալիֆաների գոյութիւնը, իսկ երկրորդի, Հռոմի մէջ՝ Աստուծային անսխալականութիւն և անհասանելի գորութիւնով շարւրւած՝ Պապերի անվերջ շղթան, նոյնիսկ աշխարհական իշխանութեան թագը յափշտակելով նրանով զարդարեցին իրենց զուլաները և զրանց առաջ խոնարհել տւեցին շա՛տ և շա՛տ թագակիր գլուխներ, և իրենց անհատական կամքին ու բնահաճոյքին ենթարկեցին շա՛տ ազգեր և ժողովուրդներ. բաւական է այդ մասին արիական պատմութեան վրայ մի ակնարկ ձգելով, վեր առնենք Եազդիշերդ (Յագկերտ)-ից յետոյ մի շարք թագաւորներ և աշխարհական իշխանութիւններ որոնք չի դիմանալով մահմետական կրօնի բարձրացրած սուրին, տեղի տւեցին և Հաճագործումի ու տիրապետութեան ղեկը թողեցին Խալիֆաներին: այսպէսով Արեւելքի և Ասիայի մի մասը, յանուն կրօնի թափւած առատ արեան ուղիւնոսի մէջ լողալուց յետոյ, նոյն հսկայ հոսանքը ուղղեց դէպ Փոքր-Ասիա, այնտեղից Բիւզանդական երկիրը և նոյնիսկ մինչև Սպանիա ուրտեղից պիտի անցներ և տարածէր համայն Եւրոպա, ջնջելու համար իր ախոյեան՝ քրիստոնէութեան ներկայացուցչութիւնը: Եւ այս արշաւանքների, այս մարդաւէր հոսանքի ընթացքում ինչե՛ր և ի՞նչ արհաւիրքներ ու դժոխային չարիքներ չղարբնւեցին խեղճ ու կըրակ անօգնական Հաճագործողի գլխին, սակայն ի՞նչ նպատակով և յանուն որի՞ Պատասխանը շատ պարզ է, յանուն կրօնի և ինպաստ տիրապետող ու Հաճագործող առանձնաշնորհւած

դասակարգի, որը սրի և հուրի, հոգեւոր և մարմնաւոր սաբսափ-ներն տակ օրից օր աւելի էր ամրապնդում համամարդկային գե-րութեան շղթաները: Կրօնական այդ արհաւիրալից արշաւանքը աւելի զօրաւոր և աւելի մեծ թափով էր կատարւում նաև քը-րիստոնեայ աշխարհում, ուր Ս. Պետրոսի ներկայացուցիչները ա-հագին բանակների գլուխ անցած՝ չէ թէ բաւականանում էին լոկ հոգեւոր աշխարհակալութիւններով, այլ նոյնիսկ աշխար-հական ու հողային ընկճումներով, և այդ միջոցով նրանք այն-քա՛ն հաստացան, այնքա՛ն զօրացան և առաջացան, որ Գերմա-նական կայսր՝ Հենրիկոս 4-րդ-ի նման աշխարհակալ ղեկավար-ներ Ս. Պետրոսի ներկայացուցիչ՝ Գրիգոր 7-րդ -ի պալատի ա-ռաջ 3 օր շարունակ, ձիւնի և ձմեռւան սառնաշունչ ցուրտի առաջ, գլխաբաց և ոտաբոբիկ ապաշխարութեան կանգնեցնել տւեցին, որպէսզի անխախտ դարձնելով իրենց հոգեւոր տիրապե-տութիւնը, այդ տիրապետութեան զօրութիւնովը մշտնջենապէս ապահովեն իրենց դասակարգի, շահագործողի շահերը:

Եւ ամէն անգամ որ ժողովուրդը զգալով իր ուսերի վրայ ծան-րացող՝ յանուն կրօնքի և հոգու փրկութեան դրւած սոսկալի լուծի ծանրութիւնը ուղեց շարժւել, կղերականութիւնը նրան առաջնորդեց դէպ խաչակրաց դաշտը, այնտեղ ոչնչացնելու մը-տածող գլուխները և թուլացնելու շահագործողի ֆիզիքական ուժերը, իսկ ինչ ամենից աւելին է, յափշտակելու նրանց տըն-տեսական աղբիւրները . . . :

Բայց եկաւ մի ժամանակ, ուր կրօնականի և կղերի այդ բիրտ ոյժը որ իշխում էր ժողովրդի հոգու և մարմնի վրայ, անկարող եղաւ սեղմելու այդ ճնշւած ժողովուրդների ազատ և համարձակ մտածողների գիտակցութիւնը և մտածումները, որով ծայր տւեց բողոքի ձայնը, իսկ այդ բողոքը խեղդելու համար կղերականու-թեան ձեռքով հնարւեց և դարբնւեց հաւատաքննութիւնը և բարդուղիմէոսեան գիշերների սաբսափները և ս «հնկեցնող ճեն-ճերահոտ անցքերը, կոտորածները և մարդախորովումները, ու-րոնք մինչև յաւիտեան որպէս նախատինք պիտի մնան քրիստոնեայ աշխարհի պատմութեան մէջ:

Եւ ո՛վ գիտէ մինչև երբ շարունակէր իրերի այդ արնոտ հո-

լովումը, եթէ Պապերի իշխանութեան դէմ սուր չբարձրացնէին Նապոլէոնը և Կարլբադին:

Թէև պատմական այդ անցքը, մարդկային դարաւոր գերու-թեան վրէժի այդ ահաւոր ապտակը ցնցեց և արմատից շարժեց արքայութեան ժառանգ՝ քրիստոնեայ կղերի իշխանութեան հիմ-քերը և նրան զրկեց աշխարհական, կամ ասենք քաղաքական տիրապետութեան իրաւունքներից և այդ իրաւունքները պաշտ-պանելու համար կազմւած ահագին զինւած բանակներից, բայց չկարողացաւ վերջնականապէս մարդկութիւնը ազատել և դուրս կորզել նրա մագիլների միջից, և այդ շատ բնական էր, որով-հետև պայքարը չէր մղւում ժողովուրդի համար, այլ թագա-բաշխութեան և աշխարհական իշխանութեան իրաւունքները կղերի ձեռքից յափշտակելու համար, այնպէս որ, թէև թուա-ցաւ կղերը և Հենրիկոսներ ու Նապոլէոնները ազատեցին Պա-պերի պատիժներից և ազդեցութիւնիցը, սակայն շահագործող ժողովուրդը, աշխատաւոր մասսան մնաց նոյնը, թէրևս նրա վի-ճակը աւելի դառնացաւ, շնորհիւ ա՛յն հանգամանքի, որ այժմ նա կեղեքման ու շահագործումի հրապարակի վրայ դարձաւ մի կռաւիճող, որին տիրանալու համար միմեանց դէմ պայքարել սկսեցին այս անգամ աշխարհական ու հոգեւոր տարրերը, եր-կուսն էլ տիրապետող և երկուսն էլ շահագործողներ:

Եւ քանի որ ցնցւած կղերականութեան մէջ կենսունակութիւն կար և նրա վրայ տարւած յաղթութիւնը կատարեալ չէր, հե-տեաբար «Կոնկորդատ» դաշնաթուղթով հաշտութիւն կայացաւ կղերական և աշխարհական թագաւորութիւնների, տիրող դասա-կարգերի մէջ, այն որոշ պայմանով և հասկացողութեամբ, որ շահագործող դասակարգից օգտւէին երկու կողմերը ևս:

Առերևոյթ եղած հաշտութեան տակ ծածկւած հակամարտ շահերը, սկսեցին եռալ և վառ պահել խուլ պայքարը երկու տիրող դասակարգերի մէջ, այդ պայքարին միշտ պատանդան ու-նենալով շահագործող դասակարգը:

Բացի գրաւած հողային և կալածական անբաւ հարստու-թիւնները, կղերականութիւնը իր կնքած թաշնաթղթի գլխաւոր պայմանները հիմնեց հետեւեալ կէտերի վրայ:

Ա.—Վանքերը, Եկեղեցիները և նրանց կալածները մնան անձեռնմխելի և ազատ որևէ տուրքից:

Բ.—Կղերականութեան ձեռքով և նրա հսկողու-

թեամբ պահած դպրոցները բացարձակապէս ազատ լինին աշխարհիկ կրթութեան հրահանգներից և որևէ տուրքից:

Գ.—Կղերականութիւնը ազատ պիտի ճնայ զինուորագրութիւնից և որևէ տուրքից:

Եւ մի շարք այսպիսի կէտեր և պայմաններ, որոնք թէև երկու կողմերի համար էլ նպաստաւոր, սակայն վտանգաւոր, ֆինասակար և քայքայիչ էին անօգնական ժողովրդի և ընչազուրկ շահագործւողի համար:

Խորամանկ կղերականութիւնը շատ հեռատեսութեամբ էր որ առաջադրեց յիշեալ հաշտութեան պայմանները. որովհետև տուրք չտալով և այդ ահագին տուրքերի ու հարկերի բեռը դնելով ժողովուրդի վրայ, նա այդ աղբիւրով, իր յափշտակած տընտեսական միջոցներովը պիտի պահէր անթիւ ու անհամար վանքեր ու եկեղեցիներ և այդ հաստատութիւնները լեցնող միլիոնաւոր կղերներ և Պապի իշխանութեան սպասարկուներ, որոնց պիտի յանձնէր այսօրւան տասնեակ հազարների հասնող կրօնական դպրոցները, չէ՛ թէ միայն ժողովուրդի հոգին ու ծիւղը լոկ կրօնական նախապաշարունակներով խաւարեցնելու ու կաշկանդելու, այլ տասնեակ միլիոնաւոր մանուկներից պապերին և կղերականութեան նւիրած ու հլու ստրուկներ պատրաստելու, որոնք գործնական կեանքի մէջ ընկած՝ ինչպէս այսօր, նոյնպէս և ապագայում, քաղաքական ասպարէզ, և նոյնիսկ պարլամենտների ու պալատների մէջ պիտի ձաքառեն կղերականութեան կորցրած փառքն ու զօրութիւնը իրեն վերադարձնելու:

Այս մի փաստ է, մի իրողութիւն է որ մեր ներկայ ընթացիկ կեանքի մէջ, նոյնիսկ այսօր կատարուած է ամբողջ քրիստոնեայ աշխարհի մէկ ծայրից միւսը և ճահճետականութեան ու կռապաշտ երկիրների տարածութեան մէջ:

Օրինակը պարզ է և դիւրամատչելի ու նրանց տպաւորութիւնը թարմ և անճոռանալի, որովհետև ա՛յնիմէ կատարեց ու դեռ կատարուած է Ֆրանսայի մէջ, նոյնը կրկնուած է այսօր Մպանիայի, Պորտուգալիայի մէջ և վաղը պիտի արձագանքէ ամբողջ աշխարհում:

Տխուր իրողութիւնների այս պատճական դարձածքների և ծալքերի մէջ, տիրող ու շահագործող դասակարգի պատրաստած համաշխարհային թշուառութիւնը և մարդկութեան դառն վիճակը, իր դարաւոր յղացումովը ծնեց այնպիսի մտածող գլուխներ և հսկայ հասկացողութիւններ, որոնք վերջին դարուս առաջին տարիների մէջ կարողացան գիտնականօրէն վերլուծել մարդկային ընկերական կեանքը, նրա տնտեսական ու քաղաքական յարաբերութիւնները և այդ առթիւ իսկ գտնել դարերով նրան շրջապատող համաշխարհային դառն թշուառութեան դրդապատճառները:

Նրանք յաջողեցին անուրանալի փաստերով ապացուցել թէ՛ ներկայ ընկերային կեանքի խանգարւած վիճակը, հասարակակարգերի խստորնակի ընթացքը, արդիւնք են գոյութեան կուր ասպարէզում և տնտեսական հողի վրայ կատարող դասակարգային մի անհաւասար կուր, ուր ամենամեծ, ամենավտանգաւոր և ֆինասակար դերն է կատարում միջազգային կղերականութիւնը իր հիմնած եկեղեցիով և շահագործած կրօնքովը:

Եւ այդ գիտնականները, ընկելային հստակաբար և անուշապանքներին վերջ դնելու կոչւած այդ ընկերվարականները, հիմնեցին այն բարձր վարդապետութիւնը, ընկերվարականութիւնը, որը մարդկային ընկերութեան ազատ վերածնութեան և հաւասար իրաւունքներով ապրելու համար, չքաշուեց նաև յանուն մարդկութեան կուր յայտարարել յանուն երկնքի և անտեսանելի Աստուծոյ երևան եկած դարաւոր տիրապետող՝ կեղեքիչ դասակարգի, միջազգային կղերականութեան, լինի՛ այդ ճահճետական համայնքների, կռապաշտների թէ՛ քրիստոնեայ աշխարհի մէջ, կուր, որը պիտի ազատէ մարդկային խիղճը, կրօնական հաճութիւնը և նրա հոգեկան աշխարհը կղերի ճանկերից, զատէ եկեղեցին պետութեան կազմից և դարձնէ նրան որպէս մի հասարակական և ուրոյն հաստատութիւն, որ առանց ծանրանալու պետութեան վրայ, հոգացի լոկ իր ծխականների ձեռքովը, իսկ քաղաքական աշխարհից, պարլամենտներից ու աշխարհական վիճակը ղեկավարող հաստատութիւններից որպէս մի կազմակերպւած ուժի, իր անցեալ բռնակալական փառքերի համար պայ-

քարոզի քշել՝ ու հեռացնել կղերականութիւնը, նրան կեդրոնացնելով իր պաշտօնի ու իր կոչումի մէջ, որպէս մի արհեստ, մի փէշակ և ուրիշ ոչինչ:

Եւ այս բոլորը ճեղ այն եղրակացութեան է բերում, որ ընկերվարականութիւնը չէ թէ ցանկանում է անկրօնութիւն քարոզել, այլ կրօնի ազատութիւն, չէ թէ եկեղեցիները քանդել, այլ անջատել պետութիւնից և չէ թէ կղերը ջնջել ու անբարոյականութիւն տարածել, այլ ծառայող, հոգեւոր և փիղիքական անբարոյականութիւններին ու այլասեռութիւններին վերջ դնելու համար ընկերային կեանքից քշել և հեռացնել համաշխարհային կղերականութիւնը, նրան տեղ տալով իր պաշտօնի և կոչումի մէջ միայն:

Մինչև այստեղ ընդհանուր գծերով միայն պարզելով ընկերվարականութեան հայեացքը և բռնած դիրքը հանդէպ կղերի, կրօնի և եկեղեցու, յետագայում պիտի պարզենք թէ ի՞նչ է մեր յարաբերութիւնը մասնաւորապէս հայ եկեղեցու նրա կրօնի և կղերի հետ:

Գ.

Պատմական և կեանքից ծնունդ առած իրական փաստերով ապացուցելով համաշխարհային կրօնի, կղերի և կրօնատեղիների գոյութեան շարժառիթները, նրանց ձգտումը և կատարած դերը մարդկային զանգւածի մտաւոր, փիղիքական, քաղաքական և տընտեսական աշխարհների մէջ, միևնոյն ժամանակ բացատրելով ընկերվարական վարդապետութեան ծնունդն ու նրա բռնած դիրքը, նրա ձգտումն ու սկսած պայքարի բուն շարժառիթները հանդէպ այդ հաստատութիւնների, միջազգային կամ ասենք համաշխարհային տեսակետով: Որպէս եղրակացութիւն՝ մեր ասելիքը պիտի կեդրոնացնենք հայ Առաքելական եկեղեցու, նրա վարդապետած կրօնի ու կղերի շուրջը, որոնք թէև համատարած քրիստոնէութեան մէկ ճիւղը, բայց և այնպէս իրենց կազմակերպական պայմաններով ու շրջապատող քաղաքական հանգամանք-

ներովը բոլորովին տարբեր տեսարան են բացում մեր հայ ընկերվարականութեան տուայ:

Բացատրենք մեր ասելիքը:

Ընդունելով կրօնը որպէս ազատ խղճի և համոզման հարց, մենք այդ հարցի վրայ չպիտի ծանրանանք և ոչ էլ նրա, այդ վարդապետութեան փիլիսոփայական ու հոգեբանական կողմերը քննադատելու պիտի մտածենք. քանի որ այդ մեր նպատակից դուրս է և այդ մասին թէրևս խօսենք ուրիշ առթիւ, սակայն այժմ նկատի կառնենք հայկական եկեղեցու և կղերականութեան հարցերը միայն:

Հայ քաղաքական իշխանութեան, ասենք թագաւորութեան անկումով, հայ կղերը կորցրեց իր քաղաքական գործունէութեան և ձգտումների գործիւնը, ոյժը և այնպէս 5-6 դարուց ի վեր ամփոփւած իր հոգեւոր պաշտօնի մէջ, նա ինքզինքը չէզոքացրեց և զտեց քաղաքական կեանքից, մի կեանք, որ ինչպէս ասեցինք աւելի քան 5 դար մեռած և դիակնացած էր քաղաքական տեսակետով:

Այստեղ, ա՛յն հայ կղերը որ իր քաղաքական իշխանութեան, աշխարհական փառքի և ղեղած տնտեսական ահագին ոյժի պաշտպանութեան համար խաչը և սուրը ձեռքին՝ Վարդանի նման կըրօնասէր իշխաններ էր առաջնորդում դէպ նահատակման արնոտ դաշտը, յուսահատած իր աշխարհական նախնիների անյաջողութիւններից, ինչպէս ասեցինք գրեթէ մեկուսացած՝ սկսեց խորհել միայն իր առօրեայ հացի, իր ապրուստի և ազգային ժառանգութիւններից իր ձեռքը մնացած մի քանի փշուրների պահպանութեան համար և ժամանակի ընթացքում հայ կղերը, տնտեսական և քաղաքական աննպաստ ու ճնշիչ պայմանների տակ իջաւ իր նախկին իշխանութեան բարձունքից և իր հօտի, իր ժողովրդի հետ թշուառութեան և դառն հայածանքների ու չարքաշ կեանքի նոյն մակարդակի վրայ կանգնելով, ներկայացաւ որպէս միջազգային քրիստոնեայ կղերականութեան զրկւած, հալածւած ու նոյն իսկ մ ու ը ա ղ ա ն մի տարր, որն իր վիճակով և բըռնած դիրքովը բոլորովին հակապատկերը եղաւ Պապերի հովանաւորած հսկայ կղերականութեանը:

Յուսահատ հայ կղերը, իրեն շրջապատող աննպաստ ու ճնշելի հանգամանքների, օտար ու թշնամի իշխող ձեռքերի սեղծումների տակ՝ սկսեց բթանալ, անզգայանալ և ոչ թէ լոկ քաղաքական, այլ նոյն խիճ մտաւոր ու հոգեկան խաւարի մէջ թաղւելով՝ ճոռանալ իր անցեալ քաղաքական ձգտումները և աշարհական ու հողային նւաճումների ծրագիրները, այդպէսով դառնալով թէև անօգուտ՝ բայց անփնաս մի տարր, որ ժողովուրդի հետ համահաւասար կերպով սկսեց ճաշակել կեանքի դառնութիւնները և գոյութեան պայքարի հալածանքները:

Այս վիճակի մէջ հայ կղերը ո՛չ կարող էր քաղաքական որևէ ձեռնարկով զբաղել, և ո՛չ էլ այդ նպատակի համար պիտի կարողանար ասպարէզ գտնել, մանաւանդ որ քաղաքական դեկը անցել էր Մահճետականութեան ձեռքը, որը սկսել էր հալածել բրիտանաց ժողովուրդի հետ նաև նրա կղեր դասը, մանաւանդ որ այս վերջինը ո՛չ պիտի կարողանար Եփեսոս-Իսլամական պաշտօններով և ո՛չ էլ պետական կազմի մէջ մտնելով վերըստեղծել իր կորցրած դիրքը:

Մահճետական տիրապետութիւնը հայ երկրի վրայ, հայ կղերին զրկեց իր քաղաքական իշխանութիւնից և հոգևորականի փառքից, ու ճրցութեան ասպարէզը նրա ձեռքից առնելով, նրան դարձրեց սոսկ ենթարկող, հալածող և հպատակող մի տարր: Ինչպէս տեսնում ենք, հայ կեանքի և նրա աշխարհի սահմաններից ներս տնտեսական պայմանների տակ մղւած պայքարի և այդ պայքարի միջոցով առաջացած քաղաքական փոփոխութիւնների և երկրի իշխանութեան դեկը Մահճետականների ձեռքն անցնելու շնորհիւ, հայ կղերն ինքն ըստ ինքեան քաղաքական ասպարէզից բշւած և չհոգեացած, նա ամփոփւեց պարզապէս իր եկեղեցիների և վանքերի մէջ, և մինչև այսօր ոչ մի տեղ չի տեսնւել որ նա, հայ կղերը պարլամենտների և պետական կազմի մէջ ներկայանար որպէս կազմակերպւած մի կուսակցութիւն, իրեն նպատակ ունենալով ժողովուրդի քւէով և զրամովը քաղաքական պայքար մղել իր անցեալ աշխարհական փառքերը և իշխանութիւնները յետ ստանալու համար. ինչպէս այդ անուճ է կաթոլիկ կղերը ամբողջ Եւրոպայի մէջ իննպատ Պապերի իշ-

խանութեան:

Ոչ մի օրինակ չկայ մեզ համոզեցնելու համար, որ հայ կղերը մինչև այսօր իր գտնւած միջավայրի մէջ քաղաքական տեսակէտով պայքարելու համար որևէ իրաւունք ունենար. ընդհակառակը, նա միշտ և ամէն տեղ զրկւած է եղել այդ իրաւունքից, բացի կրօնական շրջանի մէջ:

Այս դէպքում և այս հանգամանքում ի՞նչ վախ ունի ընկերվարականութիւնը հայ կղերից, քանի որ նա՝ հանգամանքների բերմամբ արդէն քշւելով քաղաքական ասպարէզից, այդպէսով ընկերվարականութիւնը ազատել է քաղաքական տեսակէտով իր դէմ պայքարելու ծանր լծից:

Հայ կղերն այսօր քաղաքական տեսակէտով դուրս է պայքարի շրջանից, հետևաբար ընկերվարականութիւնը նրա գոյութեան վրանասակար կողմերին պիտի նայի լոկ մտաւոր, բարոյական և միւնչև մի աստիճան էլ տնտեսական տեսակէտով, որով նա ինքզինքը կապւած է համարում բուրժուականութեան:

Ընկերվարականութիւնն այսօր բնաւ պէտք չի զգում հայ կղերի դէմ քաղաքական պայքար մղելով սպառել իր ոյժը, քանի որ նա՝ կղերը դուրս է այդ ասպարէզից, այլ ընդհակառակը նա պիտի պայքարէ իշխող և տիրապետող ընդհանուր կղերականութեան դէմ, որի մի ծասն է Պարսիկ և մանաւանդ Թիւրքիայի Պարլամենտի մէջ բազմող Մահճետական կղերը, որը չնայած Մահճետականութեան գոյութեան, բայց և այնպէս տիրում և շահագործում է ժողովուրդը իր աշխարհային կամ ասենք քաղաքական իշխանութեան դեկը ձեռքից չտալու և աշխատաւոր դասը շահագործելու համար...:

Ընկերվարականութեան պայքարը միջազգային տիրապետող կղերականութեան դէմ է միայն, ըստ որում ուժասպառ և իրաւագուրկ մի տարրի. հայ կղերի դէմ պայքարելը հոմանիշ է դոնքիշտոտի աննպատակ կռիւին, հողմադացի դէմ...:

Իսկ Հայ առաքելական եկեղեցին, լինելով դէմօկրատիկ և ժողովրդական մի հաստատութիւն, միշտ եղել է ժողովուրդին և կառավարել է այս վերջինի քւէով ու հաւաքական նւիրաբերութեամբը:

Նա, դարերից ի վեր է որ իր կապերը խզել է պետութիւնից և դարձել է ուրոյն, ժողովրդական հաստատութիւն, առանց որեւէ քաղաքական և տնտեսական կապ ունենալու որեւէ պետութեան հետ. և նա որեւէ կապ չէր կարող ունենալ Հայաստանի վրայ իշխող պետութեան հետ, քանի որ այդ պետութիւնը հիմնաւոր էր հակառակ վարդապետութեան, Մահմետականութեան վրայ, ուրը կոչւած էր հալածելու, կողոպտելու և նոյն իսկ հիմնադրատակ անելու այդ եկեղեցին, որով ինչպէս տեսնում ենք Հայկական եկեղեցին ինքն ըստ ինքեան պետութիւնից բաժանւած, առանձնացած՝ ժողովրդի հաւասար ձայնով ու նւիրաբերութեամբը պահպանում է իր գոյութիւնը որպէս ժողովրդական կրօնական մի հաստատութիւն, առանց խառնելու երկրի կազմական, նրա քաղաքական դարձածների մէջ և խոչնդոտ դառնալու նրա քաղաքական զարգացմանը, ինչպէս այդ լինում էր Փրանսայի մէջ, իսկ այս օր կատարւում է Սպանիայի և Պորտուգալիայի մէջ. հետեւաբար ընկերվարականութիւնն այսօր պէտքը չէ զգում այդ տեսակետով պայքար մղելու հայ եկեղեցու դէմ, թէև նրա պայքարը միջազգային եկեղեցական անջատման հարցի նկատմամբ մնում է անխախտ և անփոփոխ, և այդ էլ ո՛չ թէ շօվինիզմից մղւած, այլ այն պատճառով որ հայ եկեղեցու նկատմամբ արդէն կատարւած կարող ենք համարել մեր պահանջը, ուստի յանուն այդ հարցի պայքար մղելը հայ կեանքի մէջ աւելի քան աննպատակ պիտի համարել:

Եւ այս լուսաբանութիւնները տալով, մեր նպատակը չէր աւել թէ՛ հայ կղերը, կրօնը և եկեղեցին բուրդաբար կատարելութիւններ են, որոնք մտաւոր, հոգեւոր, բարոյական և տնտեսական որեւէ բարեփոխութեան կարօտ չեն. ո՛չ, այդ չէր մեր նւիրապատկը, քանի որ այդ հիմնական բարեփոխութիւնների պէտքը կայ և որի իրագործման համար Սօցիալիզմի տարածած գիտութեամբ լուսաւորւած ժողովուրդը, ինքը պիտի ձեռնարկէ բարեփոխելու իրերի այդ խաւար վիճակը և յարմարեցնելու նրան իր ժամանակակից պահանջներին, այդպիսով և աստիճանաբար իրենց իսկական կոչումին ծառայեցնել տալու յիշեալ հաստատութիւնները:

Մենք հարցը բնութեան դրեցինք լոկ իր քաղաքական և տնտեսական կողմերովը և գտանք, որ այսօր Սօցիալիզմը իր ոյժը և կենսունակութիւնը վատնած կը լինի եթէ նա, նոյն թափով և ուժգնութեամբ պայքար մղէ հայ կրօնի, եկեղեցու և կղերի դէմ, ինչ չափով որ նա ծրագրել է պայքարել տիրապետող միջազգային կրօնների, եկեղեցիների և կղերականութեան դէմ:

Ահա այս հայեացքով է որ մենք, ընկերվարականներս մօտենում ենք այդ հարցին:

Մենք բացորոշ կերպով գծեցինք ընկերվարական հայեցակէտի սահմանները յիշեալ հարցերի առթիւ, իսկ այդ սահմանից դուրս և յանուն ընկերվարականութեան հրապարակ եկած որեւէ բացատրութիւն պիտի ընդունենք միայն որպէս խալ մտքի արտայայտութիւն:

Եւ այս պարզ ու ճեկին լուսաբանութիւններից յետոյ, կարծենք որ մեր ժողովրդի միամիտ մասի մտքերը դէպ բուրժուակղերա-պահպանողական խաւար անկիւնները քարշ տալու ճիշդ մի շարք մարդիկ պիտի դադարին այլևս տղէտների առաջ աղաղակելու թէ՛ ընկերվարականութիւնը անկրօնութիւն է տարածում, թէ նա եկեղեցիները պիտի քանդի և թէ կղերականութիւնը ջնջելով անբարոյականութիւն պիտի տարածէ և այլն:

Ո՛չ, Սօցիալիզմը, ընկերվարականութիւնը չէ թէ անկրօնութիւն պիտի տարածէ — ինչպէս տեսանք, այլ կրօնի կատարեալ ազատութիւն պիտի տայ, համարելով այն՝ ազատ խղճի և համոզման մի գործ. նա չէ թէ պիտի եկեղեցիները քանդէ, այլ անջատելով նրան պետութիւններից, պիտի վերացնէ հասարակական կեանքի, քաղաքական և տնտեսական զարգացման պնդող դէմ խոչնդոտ եղող արգելքներից ամենամեծը և ամենակարեւորը. նա չէ թէ կղերը ջնջելով անբարոյականութիւն պիտի տարածէ, այլ անբարոյականութիւնը ժողովրդի մէջից արմատախիլ անելով նրա միտքն ու հոգին այնքա՛ն պիտի զարգացնէ, որ նա ինքը աշխատէ, շահագործող բուրժուայի հետ, շահագործուածի ասպարէզում կողք կողքի և շահասիրական հաւասար քայլերով առաջացող կղերին ևս իր դասակարգային շապկից մերկացնելով, նրան խառնէ ընդհանուր ազատութեան բանակի:

մէջ, որի ձեռքով միայն աշխարհագնդի վրայ պիտի հաստատուի համամարդկային ազատ, արդար և մաքուր ու վճիտ կեանքի թագաւորութիւնը, ուր «Գառը Գայլի և Ուշխարը՝ Առիւծի հետ խաղաղութեամբ պիտի ապրին»:

Իսկ եթէ այս վարդապետութեան, այս գերբնական ու երկնային որոշման հակառակ երբեմնակի փոփոքեր են լսուած իմաստակներ ընդ երանից, այդտեղ, այդ պարագայում մեղադրելին և պատասխանատուն Սօցիալիզմը, մանաւանդ Ս. Դէմոկրատիզմը չէ, այլ այն իմաստակները՝ որոնք իրենց ազատ սիրոյ և ճշմարտութեաց պրօպագանդաներովը սոյն չափ հակառակ են գնում ընկերվարական սկզբունքներին, որչափ որ ոտնակոխում են ժողովուրդի նւիրական զգացումները և ոտնակոխում՝ նրա խղճի և համոզման ազատութեան Աստուածային իրաւունքը:



Opus 1883 G. W. Wagon Springs

Gabriel H. M. Maloo

« Գ Ն Զ Ա Կ »

ԿԵՂԻՐՈՆԱԿԱՆ ՕՐԿԱՆ Ս. Դ. ՀՆԶԱԿԵԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Զ Ր Ի

Հասցէ.— M. BELLART

23 Rue Boissonade Paris (France)

« ԵՐԻՏԱՍՈՐԴ ԿԱՅԱՍՏԱՆ »

Ս. Դ. ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՕՐԿԱՆ

Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Հասցէ.— M. LAMBERT

67 Lexington Ave. New York City (U. S. A.)

Տարեկան բաժանորդագրութիւնն է՝ 10 ֆրանկ

« Ե Ր Կ Ի Ր »

Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Տաճկաստանի Համար տարեկան 30 դրուշ

Արտասահմանի » » 10

Հասցէ.— Journal «Erkir» Ada-Bazar (Turquie)

« Զ Ա Ն Գ »

Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ

Տաճկաստանի Համար տարեկան 50 դրուշ

Արտասահմանի » » 10 ֆրանկ

Հասցէ.— Tauris (Perse) Redaction «Zang»

8089 - 8100

ՀՀ Ազգային գրադարան

NL1711122

ՀՀ Ազգային գրադարան

NL1711121

ՀՀ Ազգային գրադարան

NL1711120

ՀՀ Ազգային գրադարան

NL1711119

ՀՀ Ազգային գրադարան

NL1711118

ՀՀ Ազգային գրադարան

NL1711117

ՀՀ Ազգային գրադարան

NL1711116

ՀՀ Ազգային գրադարան

NL1711115

ՀՀ Ազգային գրադարան

NL1711114

ՀՀ Ազգային գրադարան

NL1711113

ՀՀ Ազգային գրադարան

NL1711112

ՀՀ Ազգային գրադարան

NL1711111

Handwritten signature

